

րուն վրայ պահած է Յիսուսի ժամանակակից չէնքին թանկագին կտորներ՝ զոր Հրեաները անկորնչելի կը կարծէին: Հրէական աւանդութիւնը կը պահանջէ որ արեւելեան այս դրան դիմացը ամէն ոք զգուշանայ անզգաստ գործերէ, վասնզի անոր ետեւ կը բացուի Սրբութիւն Սրբոցը: Մենք չենք կրնար գիտնալ թէ Յիսուս ո՛ր ճամբով մտաւ: Ոչխարաց գուռնէն մուտքը դիւրին կրնար ըլլալ՝ եթէ մէկը հեծանելիքով մտնէր: Բայց Ոսկի գուռը մաս կը կազմէր Տաճարին՝ ուր կը լսուէին սփսաննաները ա՛յն տղաքներուն զոր դպիրները կ'ուզէին լռեցնել (Մատթ. ԻԱ. 15 և այլն): Անկէց ոչ շատ հեռու, Տաճարին պատերէն ներսը կամ գուրսը Զատկի առթիւ Յիսուսի Երուսաղէմ գալուն՝ վերջին ճամբորդութիւնը կատարուած է (Dal. էջ 337-338):

Ոսկի դրան շինութեան թուականը անստոյգ է. ոմանք կ'ընծայեն զայն Ադրիանոսի դարուն, ուրիշներ կոստանդիանոսի գործը կը նկատեն զայն, որ սակայն, Տաճարին ներսը շինուած չի թուիր, վասն զի հոն էր որ մինչև Յերոնիմոսի ժամանակ (+ 410) կանգնած էր Ադրիանոսի ձիաւոր արձանը եւ Արամազդի պատկերը: Ոմանք ալ Ոսկի դրան շինութիւնը կը վերագրեն Յուստինիանոսի. բայց 614ի պարսից արշաւանքը նկատի առնելով՝ չէ կարելի մտածել թէ ան գերծ մնացած ըլլայ աւերմունքէ: Ոսկի դրան շինութեան ստոյգ թուականը 637 էն, այսինքն իսլամական տիրապետութենէն վերջ չի կրնար ըլլալ. կը կարծուի որ ան շինուած է Հերակլի հրամանաւ: Ան յաղթական կերպով Երուսաղէմ մտաւ այս գուռէն ութը տարի առաջ, 629ին, երբ այցելեց քաղաքը իր ուսին վրայ կրելով «Սաչափայտը» զոր վերստացած էր պարսիկներէն: